

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սամվել Բալասանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայցագրերը քննարկելու կարգի մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. Օրենքների նախագծերը չեն համապատասխանում հավասար իրավաբանական ուժ ունեցող այլ իրավական ակտերի դրույթներին: Նախագծերով թերի են կարգավորվում այնպիսի հարաբերություններ, որոնք արդեն իսկ մանրամասն և համապարփակ կարգավորված են համապատասխան բնագավառներին վերաբերող հատուկ օրենքներով:

2. Օրենքների նախագծերում առկա են այլ իրավական ակտերի նորմերի անհարկի կրկնություններ: Այսպես, վարչական ակտի ընդունմանն առնչվող դիմումների ու բողոքների

մասով նախատեսված իրավահարաբերություններն արդեն իսկ մանրամասն կարգավորված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որով հստակ սահմանված են դիմում կամ բողոք ներկայացնելու և քննարկելու կարգն ու պայմանները: Միաժամանակ, անձանց դիմումների ու բողոքների քննարկման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են այլ բազմաթիվ օրենքներով՝ «Տեղեկատվության ազատության մասին», «Հարկերի մասին», «Լիցենզավորման մասին» և այլն, իսկ ոչ պետական կազմակերպություններում դիմումների և բողոքների հետ կապված հարցերը կարգավորված են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով:

Ինչ վերաբերում է անձանց առաջարկությունների հետ կապված հարաբերություններին, ապա դրանք կարգավորվում են քաղաքացիների առաջարկությունների մասով դեռևս ուժի մեջ գտնվող «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 16-ի ՀՕ-41-Ն օրենքով:

Բացի դրանից, օրենքների նախագծերն ինքնին համապարփակ և լրիվ չեն կարգավորում քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների հետ կապված հարաբերությունները: Ավելին, բազմաթիվ հողվածներում հղումներ են պարունակվում տարբեր իրավական ակտերին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլն:

Հարկ է նշել, որ միևնույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված և ուժի մեջ մտած՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Միևնույն մարմնի ընդունած՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների առկայության դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի պահանջների: Հաշվի առնելով

նշվածը՝ գտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը չկա:

3. «Հայցագրերը քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում հարկ է նկատի ունենալ այն, որ՝

1) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

ա. 3-րդ կետում «ձեռնարկություն,» բառն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում նման հասկացություն չի նախատեսվում,

բ. 4-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես, հանել «(տպագիր, ձեռագիր)» բառերը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև ամբողջ տեքստին,

գ. 5-րդ կետում «Բողոք» հասկացությունն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բողոքի նպատակն է նաև իրավունքների վերականգնումը, իրավունքների և շահերի պաշտպանությունը,

դ. 6-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ հասարակական և պետական շահերը պաշտպանվում, կարգավորվում են՝ համապատասխան օրենքների պահանջներին համապատասխան,

ե. 9-րդ կետում հստակեցման կարիք ունեն «փաստաթղթի վավերապայմանները», «քնակության և առաքման հասցեն», «ողջամիտ հստակ բովանդակություն» և «կենտրոնական գրասենյակ» հասկացությունները,

զ. 11-րդ կետում լրացուցիչ պարզաբանման կարիք ունի «հատուկ հայցագիր» հասկացությունը.

2) 3-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով այն, որ այդ դրույթը սույն օրենքի կարգավորման առարկա չէ.

3) 7-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցման կարիք ունի «անհապաղ» հասկացությունը, իսկ 2-րդ մասում՝ «առանձին օրենք» հասկացությունը.

4) 10-րդ հոդվածի 3-րդ մասում հստակեցման կարիք ունի «ողջամիտ անհրաժեշտ պատճառ» հասկացությունը: Միաժամանակ հայտնում ենք, որ հոդվածում նախա-

տեսված դրույթներն արդեն իսկ կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

5) 12-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես, հստակեցման կարիք ունի «անհատական ավելի սեղմ ժամկետներ» հասկացությունը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթով նախատեսված իրավահարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության առանձին օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ դրանք մեկ միասնական իրավական ակտով լրացուցիչ կարգավորելու կարիքը չկա, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվել գործող օրենքներում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում «Հայցագրերը քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը կընդունվի օրենքի ընդունումից հետո երկամսյա ժամկետում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Եզրակացություն

<<Հայցագրերը քննարկելու կարգի մասի>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

<<Հայցագրերը քննարկելու կարգի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի մուտքերի փոփոխության՝ պայմանավորված <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող լրացմամբ (պատժամիջոցների գծով), որի չափը հնարավոր չէ կոնկրետ գնահատել՝ ելնելով խախտումների անկանխատեսելիության փաստից, իսկ ՀՀ պետական բյուջեի ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

**ՀԱՎԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայեցագրերը քննարկելու կարգի մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի վերաբերյալ

«Հայեցագրերը քննարկելու կարգի մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայցագրերը քննարկելու կարգի մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հայցագրերը քննարկելու կարգի մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

“Հայցագրերը քննարկելու կարգի մասին”, “Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին” և “Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի /այսուհետ՝ նախագծեր/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը իրականացվել է ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի “ Նորմատիվ իրավական ակտերի՝ նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին” թիվ 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում նախագծերն ունեն չեզոք ազդեցություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայցագրերը քննարկելու կարգի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.<<Հայցագրերը քննարկելու կարգի մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Նախագծերի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Հայցագրերը քննարկելու կարգի մասին

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն օրենքը կարգավորում է՝ դիմողների կողմից, անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով, իրավասու պատասխանող մարմնին ուղղված հայցագիր ներկայացնելու, հայցագրերը դասակարգելու, վերաբերելիությունը որոշելու, քննելու եւ պատշաճ պատասխան տրամադրելու կարգն ու ժամկետները, ինչպես նաեւ դրանք խախտելու իրավական հետեւանքները:

ՀՈԴՎԱԾ 2. ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Յուրաքանչյուր դիմող իրավունք ունի հայցագիր ներկայացնելու ցանկացած պատշաճ պատասխանող մարմնի եւ ողջամիտ ժամկետում ստանալու պատշաճ պատասխան:

Սույն օրենքը չի տարածվում այն հայցագրերի քննարկման վրա, որոնց քննարկման եւ լուծման կարգը, սահմանվում է Հայաստանի Հանրապետության քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության օրենսգրքերով, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ օրենքներով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 3. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները ունեն հետեւյալ իմաստը.

1) Հայցագիր՝ դիմողի կողմից պատասխանող մարմնին ներկայացված դիմում, բողոք, կամ առաջարկություն:

2) Դիմող՝ սույն օրենքով սահմանված կարգով հայցագիր ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրավաբանական անձ, Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ:

3) պատասխանող մարմին՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, կամ դրանց պաշտոնատար անձ, հիմնարկ, ձեռնարկություն, կազմակերպություն, անկախ կազմակերպական իրավական ձեւից, կամ հիմնադրի իրավական կարգավիճակից:

4) Դիմում՝ Սույն օրենքի պահանջները բավարարող գրավոր (տպագիր, ձեռագիր) փաստաթուղթ, որն ուղղված է պատասխանող մարմնին, անձնական կամ հասարակական շահերի կարգավորման նկատառումներով:

5) Բողոք՝ Սույն օրենքի պահանջները բավարարող գրավոր (տպագիր, ձեռագիր) փաստաթուղթ, որն ուղղված է պատասխանող մարմնին, անձնական, հասարակական կամ պետական շահերի կամ իրավունքների խախտումների մասին իրազեկելու նկատառումներով:

6) Առաջարկություն՝ Սույն օրենքի պահանջները բավարարող գրավոր (տպագիր, ձեռագիր) փաստաթուղթ, որն ուղղված է պատասխանող մարմնին, անձնական, հասարակական կամ պետական շահերի կարգավորման սեփական տարբերակ (լուծում) ներկայացնելու նկատառումներով:

7) Հայցագրի դասակարգում՝ տարանջատում ըստ ներկայացված փաստաթղթի նպատակայնության (դիմում, բողոք կամ առաջարկություն) եւ ըստ լուծման ընթացակարգը կարգավորող օրենքի կիրառելիության:

8) Վերաբերելիություն՝ քննարկվող փաստաթղթում բարձրացված հարցերի կարգավորման վերաբերյալ ինքնուրույն լուծում կամ խորհրդատվություն տրամադրելու իրավասություն, կամ քննելու եւ որոշում (վարչական ակտ) կայացնելու լիազորություն:

9) Վավերական հայցագիր՝ հայցագիր, որը պարունակում է առնվազն հետեւյալ վավերականության պայմանները՝ դիմողի ստորագրությունը եւ հետեւյալ տեղեկությունները՝ դիմողի ազգանունը, անունը, հայրանունը (դիմողի անձը հաստատող փաստաթղթում նշված լինելու դեպքում), անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները, բնակության եւ առաքման հասցեն (եթե տարբերվում է բնակության հասցեից), ինչպես նաեւ ողջամիտ հստակ բովանդակություն:

Իրավաբանական անձանց անունից հայցագիրը ստորագրում է ղեկավարը, կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, նշելով իրավաբանական անձի անվանումը, կենտրոնական գրասենյակի գտնվելու հասցեն եւ առաքման հասցեն (եթե տարբերվում է կենտրոնական գրասենյակի գտնվելու հասցեից):

10) Անվավեր հայցագիր՝ սույն հոդվածի 9-րդ մասի պահանջները չբավարարող հայցագիր, ինչպես նաեւ կեղծված վավերականության պայմաններ պարունակող, կամ անընթեռնելի, կամ ոչ պարկեշտ արտահայտություններ պարունակող հայցագիր: Կեղծված չեն համարվում գրասխալները, վրիպակները:

11) հատուկ հայցագիր՝ Հանրային իրավահարաբերությունների բնագավառին չառնչվող իրավահարաբերությունների (տարածայնությունների) կարգավորման վերաբերյալ, տվյալ ոլորտում պետական լիազորություններով օժտված վարչական մարմնին ուղղված հայցագիր:

2. Այլ նորոմատիվ իրավական ակտերում, սույն հասկացությունները կիրառելի են նույն նշանակությամբ եւ իմաստով, եթե դրանց տառացի մեկնաբանությունը չի փոխում այն նորմի իմաստը եւ բովանդակությունը, որտեղ այդ հասկացությունը օգտագործվում է:

ՀՈՂՎԱԾ 4. ԱՆՎԱՎԵՐ ՀԱՅՑԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. Անվավեր հայցագիրը, չի քննարկվում եւ սահմանված կարգով ոչնչացվում է:

2. Եթե հայցագրի անվավերությունը կապված է կեղծված վավերականության պայմաններ ներկայացնելու հետ, որը պարզվել է ավելի ուշ ապա.

1) Եթե վարույթը չի ավարտվել, այն դադարեցվում եւ կարճվում է:

2) Եթե կայացվել է ակտ, այն համարվում է առոչինչ:

3. Կեղծված վավերականության պայմաններ պարունակող հայցագիր ներկայացնող՝ (ստորագրող) անձը, ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված

կարգով, եթե նրա արարքում չկան քրեական հանցագործության հատկանիշներ:

Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմում՝ դատարանին ներկայացնում է պատասխանող մարմինը:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՅՑԱԳՐԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Դիմողները իրենց հայցագրերը ժամանակին եւ օրենքով սահմանված կարգով քննարկելու նպատակով ներկայացնում են (առձեռն կամ փոստով) դիմողի կարծիքով պատշաճ պատասխանողին, ում տնօրինությանն է վերապահված տվյալ հարցի լուծումը:

2. Հայցագիր ստացած մարմինը կատարում է հետեւյալ պարտադիր գործողությունները.

1) Հայցագրի ստացման օրը այն գրանցվում է պատասխանող մարմնի հայցագրերի գրանցման գրանցամատյանում:

Հայցագրերի գրանցման գրանցամատյանի ձեւը, վարման ու պահպանման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2) Հայցագրի ստացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում, ստուգվում է դրա վավերականությունը եւ վերաբերելիությունը,

ա) եթե այն վավերական է, սակայն վերաբերելի չէ, ապա երկու աշխատանքային օրվա ընթացքում, վերահասցեագրվում է պատշաճ պատասխանող մարմնին եւ միաժամանակ այդ մասին պատշաճ կարգով տեղեկացնում է դիմողին:

բ) եթե այն վավերական եւ վերաբերելի է, ապա նույն ժամկետում դասակարգվում է:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում եթե հայցագրով ներկայացվում է բողոք եւ բողոքարկվում է պատշաճ պատասխանող մարմնի գործողությունները, ապա արգելվում է հայցագիրը վերահասցեագրել այդ մարմնին, որի գործողությունները բողոքարկվում են, այս դեպքում հայցագիրը նույն ժամկետում վերահասցեագրվում է այդ մարմնի վերադաս մարմնին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վերադարձվում է դիմողին, կից հիմնավորմամբ եւ հնարավոր իրավաչափ շարունակության վերաբերյալ կողմնորոշմամբ:

4. Հայցագիր ներկայացնելը չի կաշկանդում դիմողին, խախտված իրավունքների, կամ իրավունքների ճանաչման վերաբերյալ նույն հարցով, ցանկացած ժամանակ օրենքով սահմանված կարգով դիմելու դատարան:

ՀՈՂՎԱԾ 6. ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱԳՐԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Հատուկ հայցագրերի լուծման առանձնահատկությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 7. ՀԱՅՑԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Պատասխանող մարմինը պարտավոր է՝ կատարել հայցագրի նախնական վերլուծություն՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանված հայցագրի դասակարգման նպատակով, որից հետո անհապաղ խնդրին տալ ընթացք այն օրենքի պահանջներին համաձայն որի կարգավորման առարկան է հանդիսանում տվյալ խնդիրը:

2. Եթե հայցագրով ներկայացված հարցի կարգավորման համար չկա նախատեսված առանձին օրենք, ապա այն լուծվում է սույն օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 8. ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատասխանող մարմինը պարտավոր է՝

1. ընդունել եւ իր լիազորությունների սահմաններում, սույն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում, քննարկել հայցագրերը, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ եւ պատասխանել դրանց.
2. ապահովել յուրաքանչյուր հայցագրի՝ ժամանակին ու համակողմանի քննարկումը, դրանց առթիվ իրավաչափ որոշումների ընդունումը եւ կատարման ապահովումը
3. իրականացնել հայցագրերի համալիր ուսումնասիրություն՝ այդ աշխատանքի արդյունքներն օգտագործելով համապատասխան բնագավառում ծառայած խնդիրները լուծելիս:
4. Պատասխանող մարմիններում հայցագրերի քննարկումը կազմակերպելու սույն օրենքով սահմանված կարգի խախտման համար պատասխանատվություն են կրում այդ պարտականությունները կատարելու լիազորություն ունեցող անձը, այդպիսի առկայության դեպքում, կամ մարմնի ղեկավարը:
5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձինք ենթակա են կարգապահական պատասխանատվության, այն օրենքով սահմանված կարգով, որի կարգավորման առարկա է հանդիսանում տվյալ անձի զբաղեցրած պաշտոնը (աշխատանքը):
6. Եթե պատասխանող մարմնի ապօրինի գործողությունների կամ անգործության հետեւանքով դիմողին պատճառվել է վնաս, ապա նա կարող է հարուցել վնասների հատուցման հայց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 9. ԴԻՄՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պատասխանող մարմին հանդիսացող՝ պետական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց հիմնարկների պաշտոնատար անձինք պարտավոր են կազմակերպել դիմողների ընդունելություն՝ նրանց հայցագրերը քննարկելու եւ պարզաբանելու նպատակով, առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ նախօրոք հայտարարված օրերին եւ ժամերին:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված պատասխանող մարմիններից բացի մնացած այլ պատասխանող մարմինները իրենց ցանկությամբ կարող են հայտարարել ընդունելության օրեր, իսկ դիմողների պահանջով՝ պարտավոր են իրականացնել, պահանջի

ստացման օրվանից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում, այդ մասին նախօրոք տեղեկացնելով պահանջ ներկայացնողին:

ՀՈՂՎԱԾ 10. ՀԱՅՑԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Հայցագրերը քննարկվում եւ պատասխանվում են դիմողին տասնհինգ օրվա ընթացքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
2. Հայցագրերը որոնց լրիվ եւ օբյեկտիվ քննարկումը պահանջում է իրականացնել ուսումնասիրություն, ստուգում կամ այլ անհրաժեշտ միջոցառում՝ քննարկվում եւ պատասխանվում են երեսուն օրվա ընթացքում, որոնց մասին հայտնվում է դիմողին:
3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում նշված ժամկետները բացառիկ դեպքերում (ծավալ, լրացուցիչ միջոցառում, կամ այլ ողջամիտ անհարժեշտ պատճառ) կարող են երկարաձգվել, բայց ոչ ավել քան տասնհինգ օրով, որի մասին հայտնվում է դիմողին, նշելով կոնկրետ պատճառը:
4. Հայցագրերի քննության ընթացքի հաշվարկը սկսվում է տվյալ պատասխանող մարմնի հայցագրերի գրանցամատյանում գրառման օրվանից եւ համարվում է ավարտված, երբ ըստ էության ձեռնարկված միջոցառումների մասին պատասխանվել է դիմողին, նրան տրամադրելով գրավոր պատասխան:
5. Գրավոր պատասխանը տրամադրված է համարվում, եթե դիմողի ստորագրությամբ դա հաստատված է՝ պատասխանող մարմնի հայցագրերի գրանցամատյանում, կամ առկա է փոստային պատշաճ առաքումն ապացուցող փաստաթուղթ (անդորրագիր):
6. Դիմողին կարող է տրամադրել բանավոր պատասխան, եթե այդ մասին նա ներկայացրել է գրավոր համաձայնություն՝ հայցագրում, կամ ի լրումն դրա:

ՀՈՂՎԱԾ 11. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ անհաղթահարելի ուժի ազդեցությունը կիրառելի է սույն օրենքով սահմանված պարտավորությունների դադարման եւ պատասխանատվության վերացման համար:

ՀՈՂՎԱԾ 12. ՀԱՅՑԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Առանձին դեպքերում հայցագրերը եւ դարանց քննարկման ընթացքը վերցվում են հատուկ հսկողության, եւ դրանց կատարման համար սահմանվում են անհատական ավելի սեղմ ժամկետներ:
 2. Հայցագրերը հատուկ հսկողության վերցնելու, ժամկետներ սահմանելու եւ պատասխան պահանջելու իրավունք ունեն.
- 1) պետական իշխանության մարմինները
 - 2) հայցագրերը քննող պատասխանող մարմինների վերադաս մարմինները
 - 3) հայցագրերը քննող պատասխանող մարմինների հիմնադիրները

ՀՈՂՎԱԾ 13. ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

1. Դիմողը, որը համաձայն չէ իր հայցագրի առթիվ ընդունված որոշմանը, որը կայացվել է ոչ հանրային իրավահարաբերությունների կարգավորման նպատակով, իրավունք ունի այդ որոշումը բողոքարկել վերադասության կարգով, այն մարմին կամ պաշտոնատար անձին, որին անմիջականորեն ենթակա է բողոքարկվող որոշում ընդունած պատասխանող մարմինը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված բողոքները քննվում են.

1) վարչական մարմիններ հանդիսացող պատասխանող մարմինների դեպքում՝ վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ վարչական ակտորը վերադասության կարգով բողոքարկելու համար սահմանված կարգով:

1) վարչական մարմիններ չհանդիսացող պատասխանող մարմինների դեպքում՝ սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. վերադասության կարգով բողոքարկումը չի սահմանափակում դիմողին ցանկացած ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում դատական կարգով բողոքարկել ինչպես պատասխանող մարմնի, այնպես էլ նրա վերադաս մարմնի ակտերը(գործողությունները):

ՀՈՂՎԱԾ 14. ԲՈՂՈՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Բողոքում ի թիվս վավերականության պայմանների անհրաժեշտ է ներառել՝

1) պատասխանող մարմնի լրիվ անվանումը

2) հայցագրի ներկայացնելու եւ պատասխան (դրա առկայության դեպքում) ստանալու ամսաթվերը.

3) հայցագրով ներկայացված հարցի հակիրճ նկարագրությունը

4) պատասխանող մարմնի կողմից, հայցագրի լուծման համար կիրառված (վկայակոչված) իրավական ակտերի անվանումները

5) բողոքի հիմնավորումները՝ վկայակոչելով հայցագրի լուծման համար էական նշանակություն ունեցող այն իրավական ակտերը որոնք չեն կրառվել սակայն պետք է կիրառվեին, կամ կիրառվել են սակայան սխալ են մեկնաբանվել:

2. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջները չբավարարող բողոքները չեն քննարկվում եւ կից հիմնավորումով վերադարձվում են:

3. Բողոքի վավերականության պայմանները եւ անվավերության իրավական հետեւանքները՝ կարգավորվում են սույն օրենքով հայցագրերի վավերականության պայմաններին եւ անվավերության իրավական հետեւանքներին վերաբերող պահանջներով եւ նորմերով:

ՀՈՂՎԱԾ 15. ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Վերադասության կարգով բողոք կարող են ներկայացնել դիմողները՝ պատասխանող մարմնից պատասխան ստանալու օրվանից վեց ամսվա ընթացքում:

2. Վերադարձված բողոքներում, թերությունները վերացնելուց հետո, դիմողը կարող է այն կրկին անգամ ներկայացնել, սակայն վաղեմության ժամկետը չի փոփոխվում, այլ պահպանվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

ՀՈԴՎԱԾ 16. ԲՈՂՈՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

1. Վերադասության կարգով բողոքի քննարկումը իրականացվում է փաստաթղթային եղանակով:

Փաստաթղթային եղանակով քննության ժամանակ, ուսումնասիրվում եւ գնահատվում են՝ գրավոր բողոքը, այն հայցագիրը, որը ներկայացվել է պատասխանող մարմին, պատասխանող մարմնի գործողությունները, պատասխանը (դրա առկայության դեպքում), հարցի կարգավորման համար պատասխանող մարմնի վկայակոչված իրավական ակտերը եւ այլ փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

2. Բողոքի քննարկման եւ դրա արդյունքների վերաբերյալ տեղեկացնելու ժամկետները կարգավորվում են սույն օրենսգրքով հայցագրերին վերաբերող կարգով եւ նորմերով:

3. Յուրաքանչյուր վերադաս մարմնի լիազորություն կապված բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումների հետ սահմանված է, համապատասխան ոլորտը կարգավորող օրենքով:

ՀՈԴՎԱԾ 17. ՀԱՅՑԱԳՐԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Դիմողների կողմից՝ վարչական մարմիններ հանդիսացող պատասխանող մարմինների եւ դրանց վերադաս մարմինների ակտերը կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, մյուս բոլոր դեպքերում՝ պատասխանող մարմնի գտնվելու վայրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՈԴՎԱԾ 18. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՈԴՎԱԾ 19. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչեւ ուժի մեջ մտնելը ներկայացված եւ չքննարկված հայցագրերի հետ կապված իրավահարաբրությունների վրա, վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբ ընդունելով օրենքի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅՑԱԳՐԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հայաստանի Հանրապետության «Հանցագրերը քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ՀՀ Սահմանադրության պահանջով, այնպես էլ էական բացով, գոյություն ունեցող քաղաքացիական հարաբերությունների ծավալուն ոլորտում, որը իրավական կարգավորման անհրաժեշտություն ունի: Տվյալ իրավահարաբերությունների

կարգավորման սուբյեկտներ ի թիվս այլոց հանդիսանում են նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձիք, որոնց իրավունքների եւ պարտականությունների, սահմանափակումների եւ պատասխանատվության հետ կապված հարցեր են կարգավորվում այդ ակտով, ուստի այդ նորմատիվ իրավական ակտը համաձայն ՀՀ սահմանադրության 83.5. հոդվածի եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ կարող է լինել միայն օրենք:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼ ՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների եւ իրավաբանական անձանց ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց՝ առաջարկությունները, դիմումները եւ բողոքները ուղղված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ կազմակերպություններին, տվյալ ժամանակահատվածին բնորոշ իրավական դաշտին համապատասխան, իրավական կարգավորման են ենթարկվել՝ մինչեւ 24.11.1999 թվականը՝ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ գանգատները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքով, դրա գործողությունը դադարել է պայմանավորված՝ «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին » ՀՀ օրենքի ընդունմամբ, որը գործել է մինչեւ 18.02.2004 թվականը, այն ուժը կորցրել է դիմումների եւ բողոքների մասով եւ մնացել գործողության մեջ միայն առաջարկությունների մասով՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ:

2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված է՝ Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Սակայն փաստորեն դիմումների եւ բողոքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորում են միայն «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որը ընդգրկում է այդ իրավահարաբերությունների մի մասը, ինչպես կարգավորման օբյեկտների, այնպես էլ կարգավորող սուբյեկտների առումով, մասնավորապես կարգավորված են հանրային հարաբերությունների կարգավորման ոլորտի հետ կապված դիմումները, քաղաքացիաիրավական հարաբերությունների այլ ոլորտները այդ մասով բաց են, բացի այդ կարգավորված են միայն վարչական մարմիններին ուղղված դիմումները, որոնք ներառում են՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական եւ տարածքային կառավարման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինները, այսինքն բաց են մնում ինչպես պետական իշխանության օրենսդիր եւ դատական մարմինները, այնպես էլ պետական այլ մարմիններ եւ հիմարկներ, պետական եւ ոչ պետական կազմակերպություններ, ձեռնարկություններ որոնք հանդիսանում են այդ հարաբերությունների լիիրավ մասնակից եւ էական կարգավորիչ դեր ունեն հասարակական հարաբերությունների առանձին ուղղություններում, այդ իսկ պատճառով նրանց ուղղված դիմումների եւ բողոքների լուծման կարգը պետ է իրավական կարգավորում ունենա: Հանրահայտ է, որ յուրաքանչյուր երկրում դեմոկրատիայի ծավալման եւ կատարելագործման պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ստանում հայցագրերի, մասնավոր-

րապես քաղաքացիների առաջարկությունների, դիմումների եւ բողոքների ճիշտ ու ժամանակին քննարկումը:

Հայցագրերի քննարկումը՝ քաղաքացիների իրավունքների եւ օրենքով պաշտպանվող նրանց շահերի խախտման փաստերին արձագանքելու, այդ խախտումները վերացնելու եւ կանխարգելելու լրջագույն միջոց են:

Այսպիսով ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի պահանջը ապահովելու, դրանով իսկ հասարակական հարաբերությունների մի ծավալուն եւ էական ուղղություն իրավական կարգավորում ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընդունել նորմատիվ իրավական ակտ՝ «Հայցագրերը քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, որը կկանոնակարգի հայցագրերի՝ դիմումների, բողոքների եւ առաջարկությունների ինստիտուտը, սահմանելով դրանց մասնակից սուբյեկտները, բնորոշումները, տարբերակումները, լուծման կարգը, իրավական հետեւանքները, բողոքարկման մեխանիզմները եւ պատասխանատվությունը:

Նախագիծ

Պ-011՝-23.06.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՈԴՎԱԾ 1. Ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՀՕ- 22 օրենքը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲՈԴՈՔՆԵՐԸ

ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆ

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է՝ «Հայցագրերը քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ:

Նախագիծ

Պ-011՝-23.06.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը լրացնել՝ հետեյալ բովանդակությամբ 189.17. հոդվածով.

«ՀՈՂՎԱԾ 189.11. ԿԵՂԾ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՅՅԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼԸ

Կեղծ վավերականության պայմաններ պարունակող հայցագիր ներկայացնելը, (ստորագրելը) առաջացնում է տուգանքի նշանակում՝ այն ներկայացնող (ստորագրող) անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն ամսեկան աշխատավարձի հինգ հարյուրապատիկի չափով:»:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է՝ «Հայցագրերը քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունմամբ, որով ապահովվում է կեղծված վավերականության պայմաններ պարունակող հայցագրերի ներկայացման դեպքերում վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: